

կը բացատրէ նախոր բայով, որ կը համապատասխանէ քարահատի աշխատանքին: Իսկ Նահեա պատմազիրը ապահովաբար աւելի ճշմարիտ կ'երևնայ երբ կ'ըսէ թէ Գերեզմանին քարերուն մեծագոյն մասը խորտակեցին և կտորներն ալ վերցուցին: Այս խօսքը կը նշանակէ թէ Գերեզմանէն ուրիշ բան չմնաց, բայց միայն անոր պատերուն ստորին մասը և Գերեզմանին տեղը, ինչպէս կը տեղեկացուի յետոյ վկայութիւններէն:

Հաքէմի այս ընդհանուր քանդումներուն մէջ կործանեցան Ս. Յարութեան տաճարը, Գողգոթան եւ Մատուռը. վերջինը այլևս չվերաշինուեցաւ, եւ բոլոր ուղեգիրները կը հաստատեն այս պարագան: Ս. Յարութեան վերանորոգութենէն վերջ Երուսաղէմի ժողովրդապետական եկեղեցին նկատուեցաւ ան. արաբ իշխանութեան օրով Երուսաղէմի մէջ նուազած էր քրիստոնէից թիւը և պէտք ալ չէր մնար կառուցանելու նոյն ժողովրդապետական եկեղեցին որ հազիւ կը բաւէր բիւզանդական դարերու հաւատացեալներու բազմութեան, և եթէ կառուցանելու պէտք ալ զգացուէր, դարձեալ կարելի չէր, քանի որ Ս. Կոստանդիանոսի անդամտակին մէջ Ժ. դարուն կառուցուած էր մզկիթ մը, որուն ճակատին վրայ քանդակուած էր նշանակալից ազգարարութիւն մը:

Գրուածքիս խմբագրութեան առթիւ առաւելյապէս օգտուած ենք հետեւեալներէն. 1.— JÉRUSALEM NOUVELE, par les P. P. Hugues Vincent et F. M. Abel. T. Second. 2.— THE PILGRIMAGE OF ETHERIA.

Գողգոթայի եկեղեցիին հայկական յիշատակները.

Հաքէմի քանդած սրբավայրերը երկար ատեն մնացին նոյն վիճակի մէջ, մինչև որ Կոստանդին Մոնամախօս գահ բարձրացաւ և ան 1042ին պատեհութիւն գտաւ վերականգնելու զանոնք: Որքան որ Երուսաղէմի քրիստոնէականները մեծ ուրախութիւն ունեցան այս վերանորոգութեանց համար, բայց դարձեալ տիրող կացութեան հետեանքով կը մնային երկիւղի և սարսափի մէջ: Քիչ մնաց որ 1070 ին վերստին քանդուէր Քրիստոսի Գերեզմանը. բարեբախտաբար Արևմուտք զգաց վտանգը և Մոնա-